ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Լ Ո Ռ Ո Ւ  Մ Ա Ր Զ

**ՊՈՒՇԿԻՆՈ ՀԱՄԱՅՆՔ**

2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.02.2013Թ. ԹԻՎ 03 ՆԻՍՏՈՒՄ

**ՊՈՒՇԿԻՆՈ – 2013Թ.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում

2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները

Հավելված 1 Համայնքի աշխատակազմի կառուցվածքը

Հավելված 2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը

## 1. Համայնքի իրավիճակի գնահատում

### 1.1. Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Լոռու մարզի Պուշկինո գյուղը գտնվում է Բազումի և Վիրահայոց լեռնաշղթաների միջև, ծովի մակերևույթից 1600-1800մ բարձրության վրա: Կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ զով: Ունի տիպիկ լեռնային ռելիեֆ: Հողերն ունեն կավաավազային կազմ: Գյուղը խմելու ջուր է ստանում մոտակա սարերից բխող սառնորակ աղբյուրներից: Պուշկինոն ներկայիս անվանումն ստացել է 1870թ.-ին ի պատիվ ռուս հանճարեղ բանաստեղծ Ա.Ս.Պուշկինի:

### 1.2. Ժողովրդագրություն

Գյուղում ապրում են 334 բնակիչներ, որից տղամարդիկ 169:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է.

1. Երեխաներ (0-6 տարեկան) – 37
2. Դպրոցականներ (7-17 տարեկան) – 62
3. 18-62 տարեկան – 197
4. Թոշակառուներ – 53
5. Հաշմանդամներ – 6
6. Աշխատունակներ – 195
7. Փախստականներ – 1
8. Գործազուրկներ –
9. Ընտանիքների (ծխերի) թիվը – 256
10. Գրանցված ընտրողների թիվը – 275

### 1.3. Տեղական ինքնակառավարման մարմինները

Համայնքը ղեկավարվում է համայնքի ղեկավարի կողմից, որն ընտրվում է 4 (չորս) տարի ժամկետով:

Գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը հետևյալն է.

- գյուղապետի տեղակալ - 1 դրույք
- աշխատակազմի քարտուղար – 1 դրույք
- գլխավոր հաշվապահ - 1 դրույք
- կուլտ. գծ. մասնագետ - 1 դրույք
- տեխ. աշխատող - 1 դրույք

### 1.4. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ և բերված է հավելված 2-ում:

Համայնքի գույքը մաշված է և հնացած:

Խմելու ջրի համակարգը կառուցվել է 1960թ.-ին, որի մաշվածությունը տեղիք է տալիս ջրի կորստին և չի բացառում անձրևաջրերի ներթափանցումը համակարգ, որը վտանգավոր կդարձնի ջրի օգտագործումը:

Ճանապարհային ցանցը կարիք ունի կապիտալ վերանորոգման: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել չորս կիլոմետր ճանապարհ:

### 1.5. Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն

Կենցաղային աղբի կուտակման համար համայնքում կա առանձնացված տարածք: Աղբահանությունը կատարվում է ամիսը 1 անգամ:

Սելավատարների բացակայության պատճառով թեք լանջերի հողատարածքները գտնվում են կոռոզիայի վտանգի տակ:

### 1.6. Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 256 առանձնատուն 30 հազար քառակուսի մետր տարածքով: Կան կիսավթարային տներ, որոնք կարիք ունեն հիմնական վերանորոգման:

### 1.7. Հողատարածքների օգտագործում

- Համայնքի վարչական տարածքը – 1837 հա, որից
- Վարելահող – 439 հա
- Խոտհարք – 475 հա
- Արոտավայր – 495 հա
- Անօգտագործելի հողեր – 70 հա
- Բնակավայրի հողեր – 35 հա
- Արդյունաբերություն, տրանսպորտ – 1 հա
- Պաշտպանություն – 150 հա
- Բնապահպանություն – 1 հա
- Անտառ – 114 հա
- Տնամերձ հողեր – 57 հա
- Սեփականաշնորհված հողեր – 695 հա
- Մեկ հողաբաժնի չափը – 3.0 հա (1.5 հա վարելահող, 1.5 հա խոտհարք)
- Պահուստային հողեր – 861 հա

### 1.8. Գյուղատնտեսություն

Պուշկինո համայնքի բնակչությունը զբաղվում է ցորենի, կարտոֆիլի, կերային կուլտուրաների, ինչպես նաև բանջարա-բոստանային կուլտուրաների արտադրությամբ: Անասնապահությամբ զբաղվողները արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Երաշտի տարիներին բնակչությունը կորցնում է ստացած բերքի կեսից ավելին:

### 1.9. Կրթություն

Գյուղն ունի մեկ հիմնական դպրոց, որտեղ սովորում են 63 աշակերտ: Մեկ ուսուցչին ընկնում է 4 աշակերտ:

### 1.10. Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն

Համայնքը չունի մշակույթի տուն: Մարզահրապարակ չունենալու պատճառով երեխաները զրկված են սպորտային խաղերից: Ֆուտբոլային խաղերը կազմակերպվում են դպրոցի մարզահրապարակում:

### 1.11. Առողջապահություն

Գյուղում գործում է մեկ բուժ կետ: Շենքը գտնվում է անմխիթար վիճակում և կարիք ունի կապիտալ վերանորոգման: Բուժ կետն ապահոված է համապատասխան գույքով: Ունի մեկ աշխատող:

### 1.12. Համայնքի ուժեղ կողմերը

Համայնքի վարչական տարածքում գտնվող պահուստային հողերը:

Անտառները, սառնորակ աղբյուրները, գեղատեսիլ վայրերը, որոնց շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջությունը գյուղում:

### 1.13. Համայնքի թույլ կողմերը

- Ճանապարհների, խմելու ջրի ներհամայնքային ցանցի անմխիթար վիճակը:
- Ծնելիության նվազումը:
- Հողերի անջրդիության հետևանքով նրանց բերրիության նվազումը:

### 1.14. Համայնքի հնարավորությունները

- Բնակչության թվաքանակի համեմատ մեծ քանակությամբ հողային տարածք ունենալը:
- Ուղղակի ընտրություններով ՏԻՄ-երի ընտրության հնարավորություն:

### 1.15. Համայնքին սպառնացող վտանգները

Խմելու ջրի ներհամայնքային ջրագծի անհապաղ նորացումն անհրաժեշտ է բնակչությանը աղետաամոքսային վարակիչ հիվանդություններից զերծ պահելու համար: Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:

## *2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները*

### 2.1. Ռազմավարություն

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

- Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով:
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:

# Ծ Ր Ա Գ Ի Ր 1

## ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ*

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1960-ական թվականներին: Այն տարիների ընթացքում մաշվել է և տեղիք է տալիս ջրի զգալի քանակի կորստին: Կատարվել են ջրագծի ընթացիկ վերանորոգումներ, սակայն այն տվել է հարցի լուծման մասնակի արդյունք:

Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ջրագծի հիմնական վերանորոգումը:Պետք է վերանորոգվի 2 կմ ջրատար:

### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

- Ապահովել համայնքը շուրջօրյա ջրով:
- Նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները:
- Կանխել կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է կնքել պայմանագիր դոնոր կազմակերպությունների հետ, որոնց կողմից կներդրվի անհրաժեշտ գումարի 90%-ը, իսկ մնացած 10%-ը կներդրվի համայնքի կողմից:

Մասնագետների հաշվարկով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գումարը կազմում է 15 մլն դրամ:

# Ծ Ր Ա Գ Ի Ր 2

## ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Համայնքում կա 256 առանձնատուն, որից գազիֆիկացված է 24 տնտեսություն: Գազ չկա նաև Պուշկինոյի հիմնական դպրոցում:

Գազիֆիկացման ընդլայնման համար մասնագետների հաշվարկով անհրաժեշտ է 18 մլն դրամ, որը հնարավոր չէ ներդնել սեփական միջոցներով: Միևնույն ժամանակ գազիֆիկացման ընդլայնումը անհրաժեշտ է մոտակա անտառների հատումը կասեցնելու համար:

# Ծ Ր Ա Գ Ի Ր 3

## ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

### *ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է.*

- Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին:
- Վերացնել փողոցների ջրափոսերը:

### *ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

- Համագործակցելով դոնոր կազմակերպությունների հետ՝ կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
- Կատարել ավազի, խճաքարի փռում համայնքի փողոցներում:
- Աշխատանքներն իրականացնել 2014-2015թ.թ. ընթացքում:

# ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԻՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

հազ. դրամ

| Եկամուտների տեսակները | 2012թ. փաստ. | 2013թ. կանխ. | 2014թ. կանխ. | 2015թ. կանխ. | 2016թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|
| Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ | 6340.0 | 6554.0 | 6728.0 | 6898.0 | 6900.0 |
| | | | | | |
| Ընթացիկ եկամուտներ | 6340.0 | 6554.0 | 6728.0 | 6898.0 | 6900.0 |
| Հարկային եկամուտներ | 2509.7 | 3674.0 | 2828.0 | 2948.0 | 2900.0 |
| Հողի հարկ | 2147.4 | 2300.0 | 2400.0 | 2500.0 | 2500.0 |
| Գույքահարկ | 338.3 | 350.0 | 380.0 | 400.0 | 400.0 |
| Տուրքեր | 24.0 | 24.0 | 48.0 | 48.0 | 48.0 |
| Ոչ հարկային եկամուտներ, այդ թվում | 3830.3 | 3880 | 3900.0 | 3950.0 | 4000.0 |
| Համ. վարչ. տարածք. հողի վարձավճարներ | 330.3 | 380.0 | 400.0 | 450.0 | 500.0 |
| Պաշտոնական տրանսֆերտներ | 3500.0 | 3500.0 | 3500.0 | 3500.0 | 3500.0 |
| այդ թվում դոտացիա | 3500.0 | 3500.0 | 3500.0 | 3500.0 | 3500.0 |

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| Հ/Հ | Ցուցանիշներ | Չափման միավոր | 2012թ. փաստ. | 2013թ. կանխ. | 2014թ. կանխ. | 2015թ. կանխ. | 2016թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի վարչ. տարածք | հա | 1837 | 1837 | 1837 | 1837 | 1837 |
| 2. | Բնակչության թիվը | մարդ | 334 | 334 | 338 | 340 | 342 |
| 3. | Ծնունդը | մարդ | 7 | 8 | 8 | 9 | 9 |
| 4. | Մահացությունը | մարդ | 4 | 5 | 5 | 6 | 6 |
| 5. | Աշխատանքային ռեսուրսներ<br>այդ թվում զբաղվածներ | մարդ<br>մարդ | 186<br>144 | 190<br>148 | 190<br>148 | 190<br>150 | 190<br>150 |
| 6. | Գործազրկություն | % | 23 | 22 | 22 | 21 | 21 |
| 7. | Առևտրի օբյեկտներ | | 1 | 1 | 2 | 2 | 3 |
| 8. | Համայնքի սեփ. հողեր Օգտ. մակարդակ | հա<br>% | 947.7<br>40 | 947.7<br>40 | 947.7<br>50 | 947.7<br>50 | 947.7<br>50 |
| 9. | Խմելու ջրի ջրագծի ներհամ. երկ. | կմ | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| 10. | Համայնքի փողոցների երկար. | կմ | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| 11. | Բնակարանային ֆոնդ | շենք<br>հազ. ք.մ | 256<br>30.0 | 256<br>30.0 | 256<br>30.1 | 256<br>30.2 | 257<br>30.3 |
| 12. | Համայնքային | - | - | - | - | - | - |
| 13. | Մասնավոր | շենք<br>հազ. ք.մ | 256<br>30.0 | 256<br>30.0 | 257<br>30.1 | 257<br>30.2 | 257<br>30.3 |
| 14. | Բնակչ. կարիքավորների թիվը | ընտ. | 4 | 4 | 3 | 2 | 1 |
| 15. | 1 շնչին ընկնող ջրի քանակը | լ/օր | 100 | 110 | 110 | 110 | 110 |
| 16. | Սովորողների թիվը դպրոցում | աշակերտ | 62 | 63 | 64 | 65 | 65 |
| 17. | Գյուղապետարանում աշխ. թիվը | մարդ | 5 | 6 | 6 | 6 | 6 |

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղացիական տնտեսությունների թիվը – 256

ա) անհատական տնտեսություն – 256

2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը

ա) ցորեն – 100 g

բ) կարտոֆիլ – 700 g

գ) բանջարա-բոստ. կուլտ. – 474 g

դ) միրգ – 1000 g

ե) կաթ – 3600 g

զ) միս – 200 g

է) բուրդ – 10 g

ը) մեղր – 6 g

թ) ձու – 60.000

3. Ցանքատարածությունները

ա) հացահատիկ – 5 հա

բ) կարտոֆիլ – 6 հա

գ) բանջարա-բոստ. կուլտ. – 12 հա

դ) մրգատու այգի – 24.13 հա

4. Անասնագլխաքանակը

ա) խոշոր եղջերավոր անասուններ – 500 գլուխ

այդ թվում կովեր – 252գլուխ

բ) մանր եղջերավոր անասուններ – 70 գլուխ

այդ թվում մայրեր – 40 գլուխ

գ) խոզեր – 39 գլուխ

դ) թռչուններ – 306 թև

ե) մեղվաընտանիքներ – 100 փեթակ

զ) ձի – 19 գլուխ

է) ավանակ – 3 գլուխ

5. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը (հատ)

այդ թվում մասնավոր սեփականություն

- թրթուրավոր տրակտոր – 2
- անիվավոր տրակտոր – 5
- բեռնատար ավտոմեքենա – 6
- տրակտորային կցասայլեր – 4
- գութաններ - 2

# ՊՈՒՇԿԻՆՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



# ՊՈՒՇԿԻՆՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ

## ՑԱՆԿԸ

1. Համայնքի վարչական շենք – 1 1970թ.
2. Պանրագործարան – 1 1980թ.
3. Անասնագոմ – 1 1981թ.
4. Մետաղյա տնակ – 1 1991թ.
5. Անհայտ զինվորի հուշարձան – 1 1976թ.
6. Ջրամբար – 1 1977թ.
7. Գազուղի – 1 1973թ.
8. Գերեզմանատուն – 1
9. Կամուրջ – 1 կապ. Վերանորոգվել է 1911թ.
10. Ներհամայնքային ճանապարհներ - 4կմ